

Շոգովուրդ

22
(2872)

21 փետրվարի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

Է. Երեւան, Արվյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԿԹՈՒՅԼԱՏԻՆ «ՆՈԱ» ՖԱ-ԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼ ԵՎՐՈԳԱՎԱԹՆԵՐԻՆ




Այս շաբաթ մեկնարկում է Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնության երկրորդ շրջանը: Այն խոստանում է բավականին հետաքրքիր անցնել, քանզի մի քանի ակումբներ լուրջ տրանսֆերներ են իրականացրել, ինչը թե՛ արագ է խոստանում: Նման ակումբների թվում է 2014թ.-ին հիմնադրված՝ «Տոտո Գեյմինգ» ընկերության սեփականատեր (2017թ.-ին այն անվանափոխվել է «Դիջիթալ»-ի) Վարդգես Վարդանյանի կողմից գնված «ՆՈԱ»-ն: Ինտրիգը նրանում է, որ ՀՀՖՖ-ում Վարդանյանին սկսել են ընկալել ոչ ամբողջովին «կանտրոլի» տակ գտնվող անձ, ու շրջանառվում են խոսակցություններ, որ «ՆՈԱ»-ն չի կարող մասնացել 2024թ.-ի եվրագավաթներին (թիմն այս պահին երկրորդ հորիզոնականում է. հաշվի առնելով համալրումները՝ մեծ հավանականությամբ կլինի մրցանակային տեղերում, ինչը նշանակում է մասնակցություն ՈՒԵՖԱ-ի կողմից կազմակերպվող միջազգային մրցաշարերին): Թիմի շուրջ աճող լարվածության ֆորմալ պատճառը ՈՒԵՖԱ-ի ու ՀՀՖՖ-ի կողմից սահմանված արգելքներն են, համաձայն որոնց՝ բուքմեյքերական ընկերությունների հետ փոխկապակցված թիմեր չպետք է լինեն, առավել եւս՝ դրանց մասնակցությունը պետք է խիստ սահմանափակվի միջազգային մրցումներին: Հայկական օրենսդրությունը նման արգելք չի սահմանում. մեզ փոխանցեցին, որ ՀՀՖՖ-ի նորմերն այս առումով ավելի խիստ են ու իմպերատիվ: Սպորտային իրավունքի մասնագետ մեր աղբյուրները խոստացել են մոտ ապագայում ավելի մանրամասն մեկնաբանություններ տալ այս հարցի շուրջ, ինչը կիրառարկվի մեր կողմից: Մեր աղբյուրները փոխանցում են, որ դեռեւս տարեվերջից «ՆՈԱ»-ի սեփականատերերն ինչ-ինչ իրավական գործընթաց են սկսել, որպեսզի նշյալ խնդիրներին չբախվեն, սակայն մեր աղբյուրները հայտնում են, որ այս պարագայում առաջնային է ՀՀՖՖ ղեկավարության «դաբոն» ունենալը, որը չի խոչընդոտի, իսկ որ ՀՀՖՖ-ում, մեղմ ասած, այլ բարձր են, ու կարելի էր ցանկությունն է դա երեսաց 2023թ.-ին կազմակերպված ՀՀՖՖ Նախագահի ընտրություններից: Սպասենք զարգացումներին ու տեսնենք, թե ինչ կանի Վարդգես Վարդանյանը: Ի դեպ, 2022թ.-ին նորաբաց «Նորավանք» ակումբը դարձավ Հայաստանի գավաթակիր, սակայն նրանք զրկվեցին մրցանակից ու չկարողացան մասնացել եվրագավաթներին, քանզի ՈՒԵՖԱ-ն չթույլատրեց, ինչից հետո ՀՀՖՖ-ն «հանգիստ հետեւեց» եւ մեկ մարզային ակումբի փակմանը: Նմանատիպ իրավիճակում, ամենայն հավանականությամբ, կհայտնվի նաեւ շահումով խաղերի բիզնես ունեցող Վարդգես Վարդանյանի «ՆՈԱ»-ն:

Ի շխոլ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները հրաժարվում են տեղափոխվել գործադիր, խուսափում են Նիկոլ Փաշինյանի հետ ամենօրյա անմիջական շփումներից: «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս է գրել, որ Նիկոլ Փաշինյանը մտադիր է «չխստկա» անել գործադիրում ու ազատվել մի շարք անգործունյա նախարարներից, բայց, արի ու տես, Փաշինյանի կարգային պահեստն այնքան մեծ է, փորձառու մասնագետներ չկան, որ փոխարինողներ չի գտնում: Մեր տեղեկություններով Փաշինյանը ցանկացել է, այսպես ասած, «ռակիրովկաների» գնալ ու օրենսդիրից պատգամավորներին բերել գործադիր, անգամ նրանց առաջարկել է այս կամ այն նախարարի պաշտոնը, բայց ՔՊ-ական պատգամավորները տարբեր պատճառաբանություններով մերժել են՝ փորձելով նաեւ չբարկացնել Փաշինյանին: Տեղեկացանք նաեւ, որ պատճառն էլ այն է, որ պատգամավորները չեն ցանկանում Փաշինյանի անմիջական վերահսկողության տակ լինել ու խուսափում են նրա հետ ամենօրյա անմիջական առերեսումներից: Բացի սա, ինչպես մեզ հայտնեցին, ՔՊ-ականներն իրենց հարմարավետ են զգում խորհրդարանում, ավելի «արեստիժ» են համարում պատգամավորի պաշտոնը, դրա համար էլ չեն ցանկանում տեղափոխվել գործադիր:

Է կոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանը կալանավորումից առաջ հարցազրույց է տվել LուրջCast-ի շրջանակներում ArmComedy-ի հաղորդավարներին եւ հայտարարություն է արել, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը օգոստոսին գնացել է ՀՀ ընկերական կոմիտեի ու ասել է, որ անմեղ մարդիկ չպետք է նստեն, իսկ մեղավորները պետք է նստեն: Ինչո՞ւ է Փաշինյանը գնացել կոմիտեի եւ հրահանգ տվել նախաքննական մարմնին, որի իրավունքը չունի, ի՞նչ գիտի նա՞ ով է մեղավոր եւ ով մեղավոր չէ: Նախաքննությունը ինքը պետք է պարզի անձի մեղավոր կամ անմեղ լինելը. ինչո՞ւ է Փաշինյանը միջամտում քրեական գործերին: Այս հարցի պատասխանը փորձեցինք ստանալ ՀՀ կառավարությունից: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մամուլի խոսակցի Նազելի Բաղդասարյանին՝ հասկանալու համար, թե ինչ նպատակով է Նիկոլ Փաշինյանը օգոստոսին գնացել Քննչական կոմիտեի եւ ինչ հրահանգ է տվել: Ի պատասխան՝ նա հայտնեց, որ Վահան Քերոբյանի հայտարարությանը ծանոթ չէ, ու ինքը չէ, որ պետք է մեկնաբանի Վահան Քերոբյանի հայտարարությունը: Իսկ, ահա, Քննչական կոմիտեի խոսակցի Գոռ Արախամյանը հայտնեց, որ վարչապետը օգոստոսին Քննչական կոմիտեի չի եկել, այլ հոկտեմբերի 9-ին է այցելել, ինչի մասին իրենք պաշտոնական հաղորդագրություն տարածել են: Էկոնոմիկայի արդեն նախկին նախարար Վահան Քերոբյանին «Սինեթի» վերաբերյալ քրեական գործով մեղադրանք է առաջարկվել, եւ նա գտնվում է տնային կալանքի տակ: Հիշեցնենք, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ծառայության ձեռք բերման մրցույթի ընթացքում կատարված առերեսույթ չարաշահումների վերաբերյալ քրեական վարույթով քրեական հետապնդում է հարուցվել 8 անձի նկատմամբ:

Երեւանի մասին պատմող շարքը շատ սպասեցնել չուկեց: «Հայր եւ որդի Երեւաններ» եւ «Jeremyan Products» ընկերությունները, որոնք, ինչպես արդեն գրել էինք, համարվում են իշխանությունների կողմից արտոնյալ, որոնք մասնակցում են պետական մասշտաբի բոլոր գնման մրցույթներին, հաղթում դրանք եւ իրականացնում են մեկ անձից գնման ընթացակարգով բոլոր ներկայացուցչական աշխատանքները, խոշոր փոխանցումներ են կատարում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կազմակերպած դրամահավաքին: Բանն այն է, որ «Ժողովուրդ» օրաթերթը հետեւել է նկատել է, որ անձինք, որոնք փոխանցումներ են կատարել դրամահավաքի ընթացքում, փաստացի ֆինանսական նման եկամուտներ ստանում են ամբողջ տարվա ընթացքում: Նրանք նույնիսկ քաղաքական հայացքներով չեն հարում ներկայիս իշխանությանը, ինչը նկատելի է նրանց սոցանցերի անձնական էջերից: «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցած տեղեկությունների համաձայն՝ Երեւանի մասին ընկերություններում կա հստակ սահմանված աշխատանքի վարձատրության սահման: Աշխատակիցների մի մասը աշխատանքի վարձատրություն է ստանում 100-ից մինչ 200 հազար դրամ, իսկ, այսպես կոչված, վերնախավը՝ 1 մլն եւ ավելի: Բանն այն է, որ ՔՊ-ի դրամահավաքին 2,5 մլն դրամ հանգանակած քաղաքացիները այս երկու սակարկի մեջտեղում են, որոնք վաստակում են գրեթե 400 հազար դրամ: Ստացվում է, որ մեկ անգամ 2 մլն 500 հազար փոխանցելու համար նրանք պետք է ինայելին 6 եւ ավել ամսվա աշխատանքի վարձատրությունը: Կարծում ենք, որ ՔՊ-ի հիմնադրամն այն կառուցվել է, որի համար արժե վեց ամիս առանց հացի եւ ջրի մնալ, որպեսզի օգնեն նրանց կազմակերպել նախընտրական քարոզարշավ: Երեւանի մասին աշխատակիցները, որոնք ցանկացան մնալ անանուն, դեպքեր են հիշում, երբ իշխանության սիրելի ընկերությունը աշխատակիցներին գրանցել է կես դրույթով, որպեսզի պետությանը քիչ հարկ վճարի:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԶՐՈՒՅՑ

«ՆՐԱՆՔ ԱՅԼԵՎԱՍ ԱՆԵԼԻՔ ԶԵՆ ՈՒՆԵՆԱ»

Արցախի ԱԺ ղեկավար կազմը հանդիպել է Արցախի հարցերով հանձնախմբի համակարգող Վարդան Օսկանյանի հետ:

Քննարկվել են այն քայլերը, որոնք անհրաժեշտ են միջազգային հիմնավոր երաշխիքների ներքո ստեղծելու անվտանգ ու իրավական դրույթներով ամրագրված միջավայր՝ արցախահայության հայրենադարձման և անվտանգ կյանքի համար:

ArmLur.am-ի հետ զրույցում Արցախի ԱԺ պատգամավոր Մետաքսե Հակոբյանը մանրամասներ է ներկայացրել գործընթացից:

Տիկին Հակոբյան, երեկ հայտնի դարձավ, որ Արցախի ղեկավարությունը հանդիպել է հատուկ հանձնաժողովի հետ, որը զբաղվում է արցախահայերի վերադարձի հարցով, ու նշվեց, որ անվտանգային երաշխիքներ են փորձում ձեռք բերվել, որ որոշ ժամանակ հետո հնարավոր լինի արցախահայերի վերադարձը: Այս գործընթացը իմ է փոխում է, ու որքանով էք Դուք հավանական համարում, որ հաջողությամբ կպսակվի այս գործընթացը, ու արցախահայերը կվերադառնան:

«Այո՛, երեկ տեղի է ունեցել հանդիպում հանձնախմբի համակարգողի՝ պարոն Օսկանյանի հետ, որին նաեւ ես էի մասնակցում: Միանշանակ հանձնախմբի ստեղծումը հիմքում ունեւ այդ գաղափարը՝ հնարավորություններ ստեղծել անվտանգային ողջ համակարգով, որպեսզի Արցախի հայերը հնարավորություն ունենան վերադառնալ եւ ապրել իրենց տներում: Հանձնախմբը այդ միտումով էլ հենց ստեղծվեց, ու արդեն իրենք իրենց կազմակերպչական աշխատանքները ավարտել են, հիմա իրենց գործունեության ուղղություններն են մշակվում, թե իրենք ինչպես պիտի միջազգային հարթակներում կարողանան գործունեություն ծավալել, որպեսզի այդ հարցի շուրջ տեղի ունենան բանակցություններ: Ըստ մեր կանոնադրության՝ իրենք լիազորված են խոսել Արցախի Ազգային ժողովի անունից, հետեւաբար նաեւ Արցախի ժողովրդի անունից:

Տիկին Հակոբյան, կիսրդեք մանրամասներ, թե բանակցությունները հայկական կողմը ում հետ է տանում:

«Դեռ չեն սկսվել, որպես այդպիսին: Քանի որ հանձնախմբում կոնկրետ Հայաստանում ապրող հայեր չեն միայն, նա-



եւ նախատեսվում է, որ կլինեն այլ ազգերից շահագրգիռ մարդիկ, որոնք միջազգային դիվանագիտական փորձ ունեն, հետեւաբար այդ բանակցությունները տարբեր հարթակներում լինելու են: Չեմ կարող դեռեւս ասել, իրենք այդ ուղղությամբ հայտարարություն կտան նախապես մեզ հետ քննարկման արդյունքում առաջին հանդիպումը որ հարթակում է լինելու, բայց արդեն տեղեկացված եմ, որ մոտ ժամանակներս հանձնախմբը արտերկրում հնարավորություն է ունենալու հանդիպում կազմակերպելու, եւ արդեն իրենց առաջին քայլը մենք այդ ժամանակ կտեսնենք:

Տիկին Հակոբյան, նաեւ երեկ երեկյան հանրահավաք էր նախատեսված, որի հիմնական պահանջը ՀՀ իշխանությունների հրաժարականն էր ու Արցախի ընդդիմադիր պատգամավորները եւս հայտարարել էին, որ մասնակցելու են:

Ի՞նչ սպասումներ ունեք այս հանրահավաքներից:

«Ես ի սկզբանե հանրահավաքները դիտարկում եմ որպես տեղեկացնելու, նորից հայ ժողովրդի ոգին բարձրացնելու նպատակով: Երեւի բոլորը այդ նպատակով են գալիս: Ինձ համար կարեւոր է Արցախի օրվա խորհրդի գիտակցումը, թե 30 տարի առաջ մենք ինչ որոշում կայացրինք. այդ որոշումը, եւ կարծում եմ, հայերի մեծամասնության մոտ նույնն է մնացել, հետեւաբար պետք էր հավաքվել, օրվա խորհրդի շուրջ խոսել, պետք է ցույց տալ հենց այդ միասնությունը: Երբ մենք կլինենք իրականում միասնական, եւ կարծում եմ այդ ժամանակ այլեւս խնդիր չի լինի բարձրացնելու ներկայիս իշխանությունների հրաժարականը, նրանք ուղղակի այլեւս անելիք չեն ունենա:

Զրույցը ՔՐԻՍՏԻՆԱ ՍՈՒՇԵՂՅԱՆ



ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

Առողջապահության նախկին նախարար, ՔՊ-ական Արսեն Թորոսյանը նախորդ տարի իր ֆեյսբուքյան էջում անդրադարձել էր ճանապարհային վթարների պատճառներին: Ըստ նրա՝ վթարների մեջ իր ուրույն եւ վատ իմաստով «ծանրակշիռ» դերն ունի նաեւ ավտոմեքենաների ապակիների թաղանթապատումը, որը բերում է տեսանելիության կտրուկ անկման, ինչն էլ հենց ինքնին հաճախ պատճառ է դառնում վթարների: Այս գրառումից եւ առաջարկվող օրենքի փոփոխությունից հետո վարորդների շրջանում սկսվեց խուճապը, եւ բոլորը համատարած «ազատագրեցին» մեքենաների դիմային եւ կողային ապակիները մուգ թաղանթապատումից: Հետո սկսվեցին տուգանքներ հորդել դեպի պետական բյուջե: ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանն էլ ասում էր, որ մզեցված ապակիներով մեքենա վարելը հանրապետության օրենսդրությամբ շատ ավելի վաղ արգելված էր, սակայն տուգանքներ չէին կիրառվում, քանի որ ոստիկանությունը հագեցած չէր մթության աստիճանը չափող սարքերով (տասոմետրերով): Հավելենք նաեւ, որ վարորդներին տուգանելու հիմքում ընկած է «Անվային տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը: Սակայն, օրերս՝ ArmLur.am-ի պատրաստած ռեպորտաժից հետո, որտեղ խոսվում էր այս օրենքի գործարկման եւ արտոնյալ վարորդների մասին, քաղաքացիներից մեկն արձագանքեց՝ հիմնավորելով, որ իրեն 25 հազար դրամ տուգանելուց հետո դիմել է դատարան եւ շահել դատը: Բանն այն է, որ մեր գրուցակցին ապակիների լուսաթափանցելիության թույլատրելի շեմը գերազանցելու համար ՀՀ ՆԳՆ պարեկային ծառայությունը տուգանել էր՝ ՀՀ կառավարության թիվ 955-Ն որոշման հավելված 2-ի 6-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության եւ Մաքսային միության հանձնաժողովի թիվ 877 որոշմամբ հաստատված «Անվային տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» մաքսային միության տեխնիկական կանոնակարգի 8-րդ հոդվածի 4.3 կետի հիմքով: Քաղաքացին բողոքարկել էր տուգանքը՝ գտնելով, որ այն անհիմն է եւ ենթակա է վերացման: Հայցվորը պարեկից պահանջել է, որ նշվի, թե ինչ տեխնիկական սարքով են կատարում չափումը, եւ նշում արվի արձանագրության մեջ, սակայն պարեկը պատասխանել է, որ ինչ սարք տրամադրել են, նրանով էլ կատարել են չափումը: Հայցվորի պահանջները որեւէ կերպ չեն կատարվել, խախտվել են վերջինիս իրավունքները, եւ անհիմն ենթարկվել է վարչական պատասխանատվության: Հայցվորը ներկայացնում է նաեւ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության կողմից ներկայացված նյութերից բացակայում է նշված ստուգաչափող սարքավորման՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված տեխնիկական բնութագրի, ինչպես նաեւ ՀՀ տարածքում թիվ 092191 ստուգաչափման վկայականով սարքավորումներն օգտագործելու թույլտվության վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշումները, որը ՀՀ օրենսդրական պարտադիր պահանջ է՝ «Ճանապարհային երթելեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածով:

Շարունակությունը ArmLur.am կայքում:

ՅԵՏԱՊՆԴՈՒՄ

ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԸ ՍԱՌԵՑՎԵԼ ԵՆ

Ֆրանսիայում դասարանը ստեղծել է Լազուր ափի Ռոֆրուն կառ Մարտին հանգստավայրում գտնվող Irina Maria վիլայի նկատմամբ սեփականության իրավունքը: Պաշտոնապետ այն դասկանում է ռուսաստանաբնակ հայ գործարար Մամվել Կարադեյանին, սակայն Փարիզի դատարանը կարծում է, որ դրա իրական շահառու ռուսական նավթագազային հսկայի՝ «Գազդրոմ»-ի դուստր ձեռնարկությունն է: Այս մասին, dw.com-ի փոխանցմամբ, գրել է ֆրանսիական Le Monde թերթը:

Ինչպես նշում է Le Monde-ը, վիլան, որը տեղանքում հայտնի է Villa del Mare անունով, գտնվում է 3 հեկտար հողատարածքում: Այն, բացի բազմահարկ գլխավոր շենքից, ներառում է նաեւ երեք լողա-

վազան, թենիսի կորտ եւ ուղղաթիռի հարթակ: Այս գույքի ընդհանուր արժեքը գնահատվում է 120 միլիոն եվրո:

Վիլայի սեփականության իրավունքը, ինչպես նաեւ սեփականատեր ընկերության՝ SNC Maritime Villa Holding-ի բաժնետոմսերը ստեղծելու հրամանը թվագրվում է 2024 թվականի փետրվարի 12-ով:

Ինչպես նշում է AFP-ն, Irina Maria վիլայի նկատմամբ հետաքննությունը վարել է Փարիզի դատարանը՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչությունը (Junaco)՝ 2009 թվականի դեկտեմբերի 11-ից Փարիզում, Կիպրոսում, Ռուսաստանում եւ Ռուբրուն-Կապ Մարտինում կատարված փողերի վճարման փաստերով:

Նշվում է, որ 2016 թվականին «Գազդրոմ Նեֆտ»-ը՝ «Գազդրոմ»-ի նավթային

դուստր ձեռնարկությունը, վիլան վաճառել է Սամվել Կարապետյանին: Այնուամենայնիվ, Junaco-ի նախաքննության ընթացքում բազմաթիվ փաստեր են բացահայտվել, որոնք վկայում են այն մասին, որ վիլան իրականում երբեք դուրս չի եկել «Գազդրոմ Նեֆտ»-ի վերահսկողությունից. հայտնում է Le Monde-ը:

Լրագրողների կողմից վերլուծված փաստաթղթերի համաձայն՝ Սամվել Կարապետյանը «Գազդրոմ Նեֆտ»-ից անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող Maritime Villa Holding SNC ընկերության բաժնետոմսերը գնել է «Գազդրոմբանկ»-ի կողմից տրամադրված 115 միլիոն եվրոյի վարկի շնորհիվ: Վերջինս պատկանում է «Գազդրոմ»-ին եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի մտերիմ ընկերը համարվող Յուրի Կովալչուկին:

Ք. ՍՈՒՇԵՂՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

«ՌԵՏՈՒՐԱ ԶԿԱ»

ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ

ՏԵՐ ԿԴԱՌՆԱ

Աժ պատգամավոր Թագուհի Թովմայանը սոցցանցի իր էջում գրում է. «Այսօր Արցախյան շարժման 36-ամյակն է:

Պայքար, որն իր մեջ մարմնավորեց ժողովրդի հավաքական ձգտումը՝ վերականգնելու պատմական արդարությունը, պահպանելու ազգային ինքնությունն ու արժանապատվությունը, լիարժեք կերպով իրացնելու հայրենիքում ազատ ապրելու եւ զարգանալու իր անբակտելի իրավունքը:

Ի պատասխան Ադրբեջանի կողմից տասնամյակներ շարունակ վարվող խտրական քաղաքականության՝ Արցախի ժողովուրդը հավաքեց իր ողջ կամքն ու համախմբվեց՝ հանուն Արցախի վերածննդի եւ Հայաստանի հետ վերամիավորման գաղափարի:

Ադրբեջանի կողմից արցախահայության բռնի տեղահանությամբ հայից խլվել է իր հայրենիքում ապրելու կենսական իրավունքը: Բայց վստահ եմ, որ մեր ազգը նորից ոտքի կկանգնի եւ տեր կդառնա իր անմագորդ Հայրենիքին, որի համար իրենց կյանքը չեն ինայել հերոս դարձած մեր քաջազունները»:

ՉԻ ՍԱՍՏԵԼ

24News լրատվական կայքի խմբագրակազմի հայտարարությունը Եռաբլուրում տեղի ունեցած խուլիգանական միջադեպի կապակցությամբ:

«24News լրատվական կայքի լրագրող Մերի Մանուկյանն ու օպերատոր Ասատուր Ասլանյանն փետրվարի 20-ին Եռաբլուր գիմնազիական պանթեոնում Արցախյան շարժման 36-րդ տարեդարձի առթիվ իրականացրել են մասնագիտական գործունեություն՝ լուսաբանել են այցելուներին: Նրանց թվում է եղել նաեւ Արցախի Հանրապետության նախագահ Սամվել Շահրամանյանն ու իր թիկնազորը: Ի սկզբանե թիկնազորի անդամները մեր նկարահանող խմբին ասել են, որ Շահրամանյանը չի պատրաստվում հարցազրույց տալ, ինչին էլ մեր գործընկերներն ըմբռնումով են մոտեցել՝ հաշվի առնելով թե՛ վայրը, թե՛ այն անվտանգային մարտահրավերները, որոնք կարող էին առաջացնել Շահրամանյանի խոսքերը: Այսինքն՝ 24News-ի նկարահանող խումբը կարող էր ընդամենը չգնալ այդ հորդորին, սակայն որոշել է ընդամենը նկարահանումներ իրականացնել: Չնայած դրան՝ Շահրամանյանի ուղեկցող անձը, որի անունը, ըստ մեր տեղեկությունների, Աշոտ Դանիելյան է, աչքի է ընկել խուլիգանական պահվածքով, հայիցել լրագրողին ու օպերատորին, ինչպես նաեւ հրել վերջինիս: Այս ամենը տեղի է ունեցել Շահրամանյանի ներկայությամբ, վերջինս ոչ մի կերպ չի սաստել իր աշխատակցին:

24News-ի խմբագրակազմը խստորեն դատապարտում է թե՛ Շահրամանյանի թիկնապահի, թե՛ անձամբ նրա պահվածքը, որն իր անգործությամբ կամ էլ թողտվությամբ խրախուսում է նման խուլիգանական դրսևորումները:

Չնայած դրան՝ 24News-ը շարունակելու է հետեւողականորեն լուսաբանել Արցախի Հանրապետության սուբյեկտայնության պահպանմանն ուղղված բոլոր միջոցառումները, որովհետեւ Արցախի Հանրապետությունը չի սկսել ու, հավատում ենք, չի էլ ավարտվելու Շահրամանյանով եւ յուր թիկնազորով:

Մենք հետամուտ ենք լինելու, որպեսզի այսպիսի պահվածքը ստանա հնարավորինս լայն արձագանք ու դատապարտում»:

«Հայ ժողովրդի դասմության ընթացքում բազմադարյա մի խնդիր է մեզ միջոց ուղեկցել. դայաբաթի, դիմադրության համար գրեթե միջոց չառ դժվար է եղել ներսում նյութական ռեսուրսի հավաքումը, եւ այս գործոնը ծանրակշիռ է եղել դայաբաթի սարքեր փուլերում հաճախ որոշիչ դասճառ դառնալով դասնության համար»,- իր ֆեյսբուքյան էջում հրատարակած հոդվածում գրել է «Այլընտրանքային նախագծեր» խմբի անդամ Վահե Հովհաննիսյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Եվ հակառակը. 90-ականներին ողջ ռեսուրսը դրվեց հաղթանակի վրա, ու հաղթանակը եղավ:

«Ռեսուրս չկա» Այն, որ այս հանրային ռեսուրսի հաշվին ահռելի կապիտալի տեր դարձած շրջանակները «ռեսուրս չունեն» պայքարի համար, մենք արդեն անգիր գիտենք:

Այն, որ Արցախի շնորհիվ կապիտալի տեր դարձածները «ռեսուրս չունեն» սեփական հայրենիքի փրկության համար, դա արդեն նույնպես գիտենք:

Այն, որ հայկական խոշոր բիզնեսը մինչեւ վերջին պահը դուրս չի գալու իր կոմֆորտից, դա էլ գիտենք:

Ռուսահայ եւ արեւմտահայ կապիտալը կսկսի աշխատել միայն այն ժամանակ, երբ նրան «կասեն». սա արդեն բոլորին պարզ է: Ովքեր են ասողները, եւ ինչո՞վ են առաջնորդվելու «ասելիս». սա էլ մի առանձին խնդիր է:

Պետք է ընդունել, որ սա այսօրվա խնդիր չէ. այսպես եղել է 100, 200, 300 տարի առաջ եւ գուցե ավելի վաղ: Կարգացե՞ք նախորդ դարերի մեր հայտնի գրողներին, ու պարզ կդառնա, որ նախորդ դարերում էլ հայ մեծահարուստները չէին սիրում փող տալ ինքնապաշտպանական ջուկատների, գենք առնելու, պայքարի եւ համախմբման համար: Իհարկե, կա կարեւոր վերապահում. կամովին գուցե չէին տալիս, բայց պայքարը կար, եւ պայքարողները նրանցից այդ ռեսուրսը որեւէ մեթոդով ստանում էին:

21-րդ դարում նույնպես կապիտալը եւ պետականության զգացումը մեծ մասամբ չեն համագործակցում:

ՀՀԿ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆ ԱԳՆ ՇԵՆՔԻ ԴԻՄԱՑ

ՀՀԿ երիտասարդական միության անդամները բողոքի ակցիա իրականացրին ԱԳ նախարարության շենքի դիմաց:

«Այդ շենքում 2018 թվականից ի վեր ընդմիջում է: Դուք քայլեր չեք ձեռնարկում, որպեսզի Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունը, որը ձեր վարած քաղաքականության հետեւանքով հայտնվել է Բաքվի բանտերում, վերադառնա Հայրենիք»,-հայտարարեց ՀՀԿ ԵՄ նախագահ Յենրիխ Դանիելյանը:

Նա նշեց՝ ԱԳ նախարարության շենքում գտնվողների քաղաքականության հետեւանքով է, որ Արցախը պատմության մեջ առաջին անգամ հայաթափվել է:

Ակցիայի մասնակիցներն իրենց ձեռքին ունեն Ադրբեջանի զինված ուժերի կողմից օկուպացված Արցախի Հանրապետության նախկին նախագահների՝ Արկարի Դուկասյանի, Բակո Սահակյանի, Արայիկ Հարությունյանի, Աժ Նախագահ Դավիթ Իշխանյանի ու Ադրբեջանում անազատության մեջ պահվող այլ անձանց լու-



«Պոլիչկա դևել» հայրենասերի սյունակում

Հայ կապիտալը կարող է փող չտալ հայրենիք պահելու համար, բայց հայրենիքը կորցնելու հետո կարող է հայրենակցական միություններ, սոցիալական ճաշարաններ, օտար վայրերում կիրակնօրյա դպրոցներ ֆինանսավորել, մշակույթի տներ սարքել եւ այդպիսով «պոլիչկա դևել» հայրենասերի իր սյունակում:

Սա է մեր պետական մտածողության պատմական դեֆեկտը, որը ձգվում է դարերի խորքից:

Վստահ եմ՝ շուտով կբացվեն նաեւ Արցախի հայրենակցական միություններ, գուցե անգամ մի քանի՝ իրար հետ մրցակցող-հակամարտող՝ Մարտունի, Ասկերան, Մարտակերտ, Ճարտար, Հադրութ եւ մեր շքեղ հայրենիքի շքեղ բնակավայրերի անուններով հայրենակցական ակումբներ եւ այլ հազար տեսակի գրող ու ցավ: Ու մեծ քսակից մի փոքր գումար հատկացրած մեծահարուստները կհամարեն, որ ողջ ժողովրդին չեն կրկնապատկարում:

որ կհամարեն, որ հոգու պարտքը կատարեցին՝ ամեն ինչ հայրենիքի համար:

Այսօրվա Հայաստանում 100-ից ավել մարդ աճուրդային հայտ է ներկայացնում նախնական 50 հազար դոլարով «մաշկի համար» առնելու համար: Մոտ 800 հոգի էլ՝ այլ գնալին կատեգորիաներում: Այսինքն՝ նման հիմար բաների համար միլիոնավոր դոլարների ազատ փող կա մի մեծ խումբ մարդկանց մոտ մի երկրում, որը գերիներ ունի Բաքվի բանտերում, որի մի մեծ հատված մի քանի ամիս առաջ ենք կորցրել, որտեղ վերջին կովից ու պայթույնից 450 զոհ՝ հայր, եղբայր, երեխա կորցրած ընտանիքներ կան, որտեղ անտուն, անշոր հարյուր հազարներով երեխանք կան, որտեղ աղետի գոտում տնակներում ապրողներ կան, որտեղ նոր Եռաբլուր կա, որտեղ սահմանին հարցեր կան, հեշտ վառվող կացարաններ եւ թշնամու դեմ կանգնած թերզինված զինվոր ու սպա կա, բուժման փող չունեցողներ կան եւ այլն, եւ այդպես շարունակ»:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

սրանք, իսկ ԱԳՆ-ն ներկայացնում են Արաբաթի նման մարդիկ: Իսկ այն մարդիկ, ովքեր կարողացան Արցախից հասնել Հայաստան, տեսան մի իրավիճակ, որտեղ հայրենիքի համար պայքարող արցախահայ երիտասարդները նստած էին բանտերում:

Ստացվում է՝ եթե մարդը չի հայտնվել Բաքվի բանտերում, օրվա իշխանությունները ամեն ինչ կանեն, որպեսզի նրանք հայտնվեն Հայաստանի բանտերից մեկում: Այսօր դատարկածեռն չենք եկել. որպեսզի ԱԳՆ-ի անգործությունը մի քիչ մեղմվի ու ինչ-որ բանով զբաղվեն, նրանք բերել ենք տարբեր խաղեր՝ դոմինո, նարդի, թենիս, բատմինտոն. գոնե կկարողանան սփոփել իրենց անգործությունը:

Բերել ենք նաեւ ամենակարելիորը՝ մոնոպոլիա, ինչը շատ հոգեհարազատ է սրանց: Թե՛ այս խաղի մեջ, թե՛ այս իշխանությունների մոտ կա մի պիղծիկ՝ եթե ձեզ առաջարկում են շատ գումար, կվաճառեք ցանցած բան»,- ասաց երիտասարդներից մեկը:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԿԵՂԾԻՔ՝ ՊԵԿ-ՈՒՄ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների կողմից իրականացված օդերասիվ-հեռախոսային միջոցառումների արդյունքում նախաձեռնված ֆրեական վարույթով կասարված նախաքննությամբ բացահայտվել են ՀՀ ՊԵԿ դաշնային անձանց կողմից կաշառք ստանալու, դաշնային կեղծի կասարելու, ինչպես նաև ՊԵԿ նախկին աշխատակցի կողմից ապօրինի վարձարություն ստանալու դեպքեր:



Նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է, որ ՀՀ ՊԵԿ Արեւելյան մաքսատուն-վարչության «Բագրատաշեն» մաքսային կետ-բաժնի պաշտոնատար անձը, օգտագործելով իր ծառայողական լիազորությունները, տնտեսվարողի կողմից ապրանքների ապօրինի ներմուծումը թույլատրելու համար ՊԵԿ նախկին աշխատակցի Ն. Մ.-ի օժանդակությամբ Ա. Պ.-ից պահանջել է ստացել է ընդհանուր 400.000 ՀՀ դրամ կաշառք եւ կատարել պաշտոնական կեղծիք:

սով Գ. Զ.-ին դրդելով կատարել պաշտոնական կեղծիք:

Բացի այդ, Ն. Մ.-ն եւ Ա. Պ.-ն պայմանավորվածություն են ձեռք բերել վերը նշված մաքսային տեսուչի՝ Գ. Զ.-ի հետ՝ սահմանված չափաքանակները գերազանցող ապրանքները Ա. Պ.-ի կողմից առանց մաքսագերման ՀՀ ներմուծելը թույլատրելու դիմաց նշված պաշտոնատար անձին յուրաքանչյուր ներմուծման ժամանակ մինչեւ 100.000 ՀՀ դրամ կաշառք տալու վերաբերյալ:

Ա. Պ.-ի կողմից մաքսային վճարումներից խուսափելու աջակցելու նպատակով Գ. Զ.-ն նույն մաքսակետի երկու այլ տեսուչների խնդրել է ներմուծված ավտոպահեստամասերի վերաբերյալ կեղծ տեղեկություններ մտցնել մաքսային պաշտոնական փաստաթղթերի գրանցման տեղեկատվական համակարգում, թե, իբր, դրանք չեն գերազանցում սահմանված չափաքանակները՝ այդ կերպ համոզելու եղանակով նշված տեսուչներին դրդելով կատարել պաշտոնական կեղծիք:

Դրանից հետո Գ. Զ.-ն հանդիպել է Ա. Պ.-ին եւ վերջինիս օգտին իր իշխանական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով դրսեւորած թողտույության, հովանավորության եւ ապօրինի անգործության համար նրանից

անձամբ ստացել 100.000 ՀՀ դրամ կաշառք:

Գ. Զ.-ն վերը նշված եղանակով Ա. Պ.-ի կողմից մի շարք այլ դեպքերում նույնպես առանց մաքսագերման ավտոպահեստամասեր ՀՀ ներմուծելը թույլատրելու դիմաց նրանից ստացել է եւս 300.000 ՀՀ դրամ:

Վերը նշված հանցավոր արարքների համար Գ. Զ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (4 դրվագ), 445-րդ հոդվածի 1-ին մասով, 46-445-րդ հոդվածի 1-ին մասով (4 դրվագ), Ա. Պ.-ին՝ 439-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (4 դրվագ), Ն. Մ.-ին՝ 438-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 46-445-րդ հոդվածի 1-ին մասով եւ 437-րդ հոդվածի 1-ին մասով: Եվս երկու մաքսային տեսուչի մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Դատախազի կողմից հաստատվել է մեղադրական եզրակացությունը, եւ վարույթի նյութերն ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննելու համար:

ՔՆՍՐ ՍՆՆՈՒԿՅԱՆ

ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

Ավարտվել է Պռոշյան գյուղում բռնություն գործադրելով ավազակություն, մի խումբ անձանց կողմից համապետականների նկատմամբ ֆիզիկական ներգործություն կատարելու եւ վերջիններիս առողջությանը վնաս պատճառելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

ԶԿ-ից հայտնում են, որ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Նաիրիի քննչական բաժնում իրականացված քննչական եւ վարույթային սահմանափակ գործողություններով պարզվել են դեպքի էական մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ տուժողների, որոնցից մեկն անչափահաս է, եւ ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց շրջանակը: Վերջիններիս գործողություններին տրվել են համարժեք իրավական գնահատականներ:

Նախաքննությամբ պարզվել է հիմնավորվել է, որ 2023 թվականի հունիսի 6-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Պռոշյան համայնքի թվով 7 բնակիչներն այլ անձանց հետ, ավտոմեքենաներով, խմբի կազմում մարմնական վնասվածք պատճառելու նպատակով այցելել են նշված համայնքում վարձակալությամբ բնակվող անձի տուն, որտեղ խմբի կազմում, լրացնելով մեկը մյուսի գործողությունները, ձեռքերով եւ ոտքերով, ինչպես նաեւ քննությամբ չպարզված առարկաների գործադրմամբ հարվածներ են հասցրել վերջինիս եւ նրա չորս որդիների, ինչպես նաեւ վերջիններից մեկի կնոջ մարմնի տարբեր հատվածներին՝ նրանց պատճառելով տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Այնուհետեւ առերեսությամբ հանցագործություն կատարած անձանցից երկուսը բռնության գործադրմամբ, քաշել-պոկելու եղանակով, հափշտակել են տուժողներից մեկին պատկանող ոսկյա վզնոց, ինչպես նաեւ տուժողներից մեկի կնոջը պատկանող ոսկյա վզնոց եւ ոսկյա խաչը:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա ենթադրյալ հանցագործություն կատարած անձանցից երկուսին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով (3 դրվագ), 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, 195-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 5-րդ կետերով եւ 252-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներ կատարելու համար:

Եվս հինգ անձի մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով (3 դրվագ), 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, 195-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 5-րդ կետերով:

Որպես խափանման միջոց մեղադրյալներից մեկի նկատմամբ ընտրվել է տնային կալանք, մեկի նկատմամբ՝ վարչական հսկողություն, մյուս հինգի նկատմամբ՝ բացակայելու արգելք:

Նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը՝ յոթ անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ՀԱՆՑԱՆՔ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Երեւան ֆաղափ Աջափնյայ եւ Գավթաբեն վարչական շրջանների դատախազությունում դեռահաս (համայնֆային) անօրինակ դաշնային հայց հարուցելու լիազորության ժամկետում ուսումնասիրվել են Աջափնյայ վարչական շրջանի «Բուենոս Այրես» զբոսայգու հակազդված՝ դեռահաս սեփականություն հանդիսացող հողատարածքի նկատմամբ գույքային իրավունքների գրանցման ընթացակարգերը:

զամարդի համար նախատեսված ընդհանուր օգտագործման տարածքում գտնվող ինքնակամ շինություններին տրվել են Հայաբյան 65/6 եւ 65/4 հասցեները:

Երեւանի քաղաքապետի՝ 2008 թվականի հունվարի 22-ի եւ 2009 թվականի մայիսի 6-ի որոշումներով՝ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի (օտարման ոչ ենթակա տարածքներ) սահմանափակումների ցանկում ներառված վերոնշյալ տարածքները քաղաքապետարանի պաշտոնատար անձինք ուղիղ վաճառքի միջոցով օտարել են ֆիզիկական անձանց:

Մասնավորապես՝ Հայաբյան փողոցի 65/6 հասցեում գտնվող 19.5 քմ մակերեսով կառույցը, 515.89 քմ մակերեսով հողամասը, ինչպես նաեւ Հայաբյան 65/4 հասցեում գտնվող 36.28 քմ կառույցն ու կառույցի համար առանձնացված 42.16 քմ մակերեսով հողամասերն ուղղակի վաճառքով օտարվել են այն անձանց, որոնք կառուցել են ինքնակամ շինությունները:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են առերեսությամբ հանցանքի դեպքեր՝ դատախազը հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե:

Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնական լիազորությունները չարաշահելը):

Դատախազությունը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում միջոցներ է ձեռնարկում համայնքային սեփականություն հանդիսացող գույքը համայնքին վերադարձնելու նպատակով:

Ք. ՍՆՆՈՒԿՅԱՆ

● Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 19-ից 20-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 67 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԱՐՑԱԿ

«ԻՄ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՆՏԵՂ Է»

«Կառավարություն եկել էմ այն խնդրանքով, որ առաջինը մեր Արցախը հետ տան, մենք էլ վերադառնանք մեր տները»,- փետրվարի 20-ին՝ կառավարության դիմաց անհետ կորած զինծառայողների բողոքի ակցիայի ժամանակ, լրագրողների հետ զրույցում ասաց հարդուի Մուշկյանը:

«Ես երկու անգամ եմ տարհանվել՝ նախ՝ Յաղոթից, որից հետո գնացել եմ Ստեփանակերտ, հրաժարվել եմ սերտիֆիկատից, ասել եմ մեր հող ու ջուրն եմ ուզում: Ես 41 տարի այնտեղ ապրել եմ, ամուսնացել եմ, 5 երեխա եմ ունեցել, իմ մանկությունը, հիշողությունը ամեն ինչ այնտեղ է: 2020-ի պատերազմից հետո հետ եմ գնացել Ստեփանակերտ, էստեղ տուն եմ ստացել: 44-օրյա պատերազմում համ տղես է զոհվել, համ փեսաս: Ես չեմ պատկերացրել, որ Ստեփանակերտն էլ կտան թուրքերին:

Հիմա դռներում եմ ընկել: Եթե մենք չենք գնալու Արցախ, թող գոնե մեր երեխեքի շիրիմները բերեն, մենք կարողանանք երեխեքի գերեզմաններին մի ծաղիկ դնենք, շիրիմները մաքրենք»,-ասաց նա:

Կինն ասաց, որ փեսան՝ Արմեն Բաղասյանը, Մարտական խաչի է արժանացել. «Հիմա աղջիկս այդ Մարտական խաչի գումարներն էլ չի ստանում, երեխաների նպաստներն էլ են կտրել, երկու անչափահաս երեխա ունի: 50-հազարական դրամ ստանում էր, հիմա էլ չեն տալիս:

Ես հիմա վարձով ապրում եմ Չարենցավանում, մինչեւ տեսնենք՝ մեր հարցն ինչպես է լուծվում: Ես երկրորդ կարգի հաշմանդամություն ունեմ: Երբ տղաս զոհվել է, ինձ ինսուլտ է խփել, կոմայի մեջ եմ ընկել, մի քանի օր հետո իմացա, որ բալաս չկա: Դեղերով ապրում եմ, բայց սա ապրել չի: Ամուսինս 1990-ականների պատերազմի մասնակից էր, հաշմանդամություն ունի, բայց նորից գնաց պատերազմ: Ամուսինս ու երկու որդիներս»:

Հարցին, թե ինչ ակնկալիք ունի կառավարությունից, Անուշիկ Ասրյանը պատասխանեց. «Ոչ մի հույս չունեմ: Այն պատճառով, որ մեզ որպես զոհվածի ծնող առաջնահերթ տուն են տվել Ստեփանակերտում, բայց հիմա դա էլ եմ կորցրել: Չգիտեմ էլ ինչ մտածեմ: Եթե պետք է տունը կորցնեի, թող ժամանակին ասեին, տղայիս տեղափոխեիք»,-«Եռաբլուր»:

Չեմ կարողանում համակերպվել իմ հայրենիքի կորստի հետ: Եթե հետ չենք գնալու, գոնե մեր երեխեքի շիրիմների համար մի բան մտածեն, մի տեղ սարքեն, ես տանեմ իմ երեխու նկարի մոտ մի ծաղիկ դնեմ: Բայց ոչ մի լուծում չկա»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականին կորել է երեանի պետական հենակետային բժշկական քոլեջի մանկաբարձական գործ բաժնի (խումբ 409) ուսանողուհի Ազգանուշ Ղազարյանին՝ 2008 թվականի հուլիսի 02-ին շնորհված AK N 065375 դիպլոմը:

ՈԳԵՂԵՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԻ ԱՐԱՐՈՒՄՆ Է

Լայն արածում ստացած բյուր կարծիք կա, թե դասնագիտությունը հեռու է ճշգրիտ լինելուց: Մակայն, դասնությունը համակարգային իմացության սիրություն է, այն լույս փաստերի, քվերի եւ անունների շարադրանք չէ: Պատմությունը անցյալի միջոցով ներկայի արարումն է աղազայի լինելիության համար: Կարդում ես Ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ 5-րդ Սուրենյանցի խոսքը եւ համոզվում, որ դասնությունը սիրում է կրկնվել դրա դասերը չյուրացրած ժողովուրդների համար:

«Հայրենիքի պայծառ հորիզոնը նորից մթնեց, խաղաղ կյանքը նորից խանգարվեց. հայ արևաքամ ժողովուրդը սահմանների վրա տեղահան բաց երկնքի տակն է մնացել. մեր սահմանների վրա նորից գոռում են թնդանդները, դարձյալ երկու տարի առաջվա մղձավանջը տիրել է ամենուրեք, եւ ամենքի բերնից լսվում է «գալիս է թշնամին»: Այո, Հայրոց ժողովուրդ, գալիս է թշնամին, անգույթ թշնամին, նա արդեն մեր դռան, մեր դեմ կանգնած է եւ յուր վերջին ուժերը հավաքած՝ հուսահատ կռիվ է մղում եւ ուզում է մեզ բոլորովին տանից-տեղից, հայրենիքից եւ ազատությունից զրկել եւ Իսրայելի նման մեր ոսկորներ անապատի մեջ ցիրուցան անել: Ի՞նչ ես մտածում դու անել. կռվել՝ քաջաբար եւ մեռնել հերոսաբար, թե՛ հավիտենական ստրուկ դառնալ կամ պարանոցը թշնամու սրի առաջ պարզել եւ ոչնչանալ: Հեռու, հեռու քեզանից այդ ինքնակործան միտքը: Եթե քեզ համար թանկ է հայրենիքը, եթե դու սիրում ես ազատ ապրել, եթե քեզ համար նվիրական եւ սուրբ է հայի անունը, պատիվը, հայրերիդ ու պապերիդ արյունով ներկված եկեղեցին, ընտանեկան սրբությունը եւ օջախը, ապա ժամանակն է, որ դու զենքը ձեռքիդ պաշտպան հանդիսանաս վտանգված հայրենիքիդ:

... Երկու տարվա կյանքը մեզ սովորեցրեց, որ մենք պետք է պաշտպանենք մեր հայրենիքը, օտարը մեզ չօգնեց եւ չի օգնելու: Հայ քաջարի՛ զինվոր, դու քո քա-



ջույթամբ եւ անվտեղությամբ աշխարհք զարմացրիր, հավաքիր ուժերդ վերջին անգամ, տո՛ր մի անգամ էլ քո մահացու հարվածը հայրենիքի եւ հայի ազատությունը ջնջել ցանկացող անողորմ թշնամու: Հավատա՛մ եւ հավատա՛, թե քո այդ վերջին հարվածով հավիտյանս կջարդես թշնամուն անկանգուն կերպով, որովհետեւ սա նրա վերջին հուսահատական կռիվն է՝ կամ ոչնչանալ հավիտյան եւ կամ ոչնչացնել քեզ:

... Գնացեք կռվեցեք քաջաբար եւ ձեր սրերով մաքրեցեք ձեր ճանապարհը դեպի ձեր մոխրացյալ վաթանը՝ Մուշն ու Սասուն, դեպի Ս. Կարապետ ու Աղթամար: Իսկ դուք՝ Արարատյան աշխարհի հարազատներ, Վաղարշապատի, Օջականի, Աշտարակի, Սարդարապատի, Ապարանի, Շիրակի, Ծաղկաձորի եւ Գեղարքունիաց գավառներ, թողե՛ք ձերերին, ձեր մայրերին եւ քույրերին ձեր տնային աշխատանքները, ձեր ազատության վտանգ է սպառնում, թե՛ք դեպի սահմա-

նագլուխներ, հիշեցե՛ք Ջեյվան ու Սարդարապատ, որտեղ ցույց տվիք ձեր քաջությունը, որտեղից թշնամուն հալածական փախցրիք, ելե՛ք ի հանդես, ներքին թշնամիները մաքրեցիր, մաքրի՛ր քաջաբար եւ արտաքին թշնամուդ, որպեսզի Մասիսի գլխին տնկված Հայկական դրոշակն անսասան մնա:

... Ես հավատում եմ, իմ սիրելի՛ ժողովուրդ, քո քաջությանը, ես հավատում եմ քո անշեղ հարվածին, ես հավատում եմ Հայաստանի հզոր Աստծուն եւ նրա սքանչելիքներին. նա ուժ տվեց ու կարողություն մեր մի բուռ քաջերին, երկու տարի անընդհատ հարվածելու հայրենիքի եւ եկեղեցու թշնամուն. նա այս անգամ ես կտա հայրենիքի քաջերին փառավոր հաղթանակը եւ խորխտացած թշնամուն խորտակված ցիրուցան կհալածե՛ք: (2 հոկտեմբերի, 1920 թվական, Վաղարշապատ: «Էջմիածին» շաբաթաթերթ):

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԹԵՐԻ Է

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Հայաստանյան լրատվագրություն եւ սոցցանցերի հայկական սիրությունը ֆեյսբուքում անհամար անգամ է դարձել ՄԱԿ-ում Հայաստանի փեյսբուքային վերաբերյալ «Ամերիկայի ձայն»-ի դասրասած ռեպորտաժը, որում փորձ է արված համադրել այդ կառույցում Հայաստանի եւ այլ երկրների (ՄՄՆ, ՌԳ, Վրաստան, Թուրքիա, Արգենտինա) փեյսբուքային շուկաները: Չնայած մտահոգացման հետաքրքիր լինելուն՝ դեմք է փաստել, որ փեյսբուքային շուկաների եւ դրանց համադրության վերլուծության փորձը թերի է եւ ոչ հաջողված:

Վերլուծության մեջ ամբողջովին անտեսված է քվեարկության դրվող հարցերի բովանդակային կողմը, իսկ քվեարկությունների պատկերը ներկայացված է խիստ ընտրողաբար: Անհասկանալի է, թե ինչու եւ ինչ չափորոշիչով են տեսանյութում առանձնացվել ՄԱԿ-ի անդամ հանդիսացող 193 երկրներից միայն մի քանիսը:

Քվեարկությունները Միավորված ազգերի կազմակերպության առօրյա գործու-

նեության մասն են, եւ դրանց, որպես կանոն, նախորդում են բանակցային գործընթացներ, որի շրջանակներում ՄԱԿ-ի տարբեր անդամ երկրներ փորձում են համաձայնության հասնել բազմաթիվ հարցերի շուրջ: Բանակցային այդ գործընթացում կարեւոր են ինչպես միջազգային տարբեր հարթակներում համագործակցության վերաբերյալ տարբեր երկրների միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունները, այնպես էլ կուլիսներում ձեռք բերվող իրավիճակային համաձայնությունները՝ հիմնված փոխադարձության սկզբունքի վրա: Այս կարեւոր գործոնները եւս անտեսվել են վերլուծության մեջ:

ՄԱԿ-ում Հայաստանի քվեարկության վերլուծության օբյեկտիվության պահպանման համար կարեւոր է հաշվի առնել նաեւ Հայաստանի պետական շահերը քվեարկության դրվող բանաձեւերի համատեքստում, ինչը նույնպես անտեսվել է: Քվեարկությունների վերլուծության շրջանակներում հաշվի չեն առնվել նաեւ տարբեր քվեարկություններից հետո անդամ երկրների ներկայացուցիչների բացարձակ ելույթները, որի իրավունքից

օգտվում է նաեւ Հայաստանը՝ պարզաբանելով այս կամ այն հարցում իր դիրքորոշումը:

Հատկանշական է, որ ՄԱԿ-ում Հայաստանի քվեարկության վերաբերյալ վերլուծյալ վերլուծության մեջ առկա թերություններին իր պաշտոնական մեկնաբանության մեջ անդրադարձել է անգամ ՀՀ ԱԳՆ՝ հստակ ամրագրելով. «ՀՀ-ն քվեարկում է՝ ելնելով իր ազգային շահերից, հաշվի առնելով ներկայացված բանաձեւերի բովանդակությունը, նախապատմությունը, քննարկման ընթացքը, այլ ոչ թե այլ երկրների հաճոյանալու ցանկությունից»:

Ամփոփելով նշենք, որ ցանկացած երեւոյթի վերլուծության ժամանակ օբյեկտիվության եւ ճշգրտության ապահովման համար անհրաժեշտ է այն դիտարկել համակողմանիորեն եւ ոչ թե ընտրողաբար, հակառակ դեպքում վերլուծության արդյունքները չեն կարող արտացոլել իրական պատկերը, այլ կդառնան հանրությանը շփոթության մեջ գցող փաստերի մանիպուլյացիա:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՍԵՎ ՅՈՎԱԳ-2»

ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂԵՐԸ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Գրող, հրապարակախոս, լրագրող Ասոս Աղաբաբյանն ընթերցասեր հանրությանն է ներկայացրել իր հեղինակած նոր վեպը՝ «Սեւ հովազ-2»-ը: Հեղինակը հայտնեց, որ վեպում ներկայացրել է, թե ինչպես Հայաստանը կարող է հաղթահարել վերջին տարիների հայտնի իրադարձությունների հետևանքով առաջացած խնդիրները:

«Սա հինգ ամիս առաջ լույս տեսած «Սեւ հովազ-1» վեպի շարունակությունն է: Երկու վեպերում ներկայացված է արցախյան երեք պատերազմների միջև այս օրեր ընկած ժամանակահատվածը: Ավելի ստույգ՝ «Սեւ հովազ-1»-ն ընդգրկում է 1989-96, իսկ «Սեւ հովազ-2»-ը՝ 1996-ից մինչև այս տարվա հունվարի 10-ը: Սակայն, վեպերի առանցքը ոչ թե այդ երեք պատերազմներն են, այլ «Սեւ հովազ» հետախուզական հատուկ ծրագրի, խմբի անդամների գործունեությունը, կյանքի անցած ամբողջ ուղին՝ սկսած 2000 թվականին Շուշուում բանտարկվելուց»,- նշեց Աշոտ Աղաբաբյանը:

Նա ընդգծեց, որ իր նոր ստեղծագործությունը նաեւ կարեւոր ուղերձ է հայ ժողովրդին. «Սա ծրագրային վեպ է. ակնառու գործող պրոֆեսիոնալների վկայությամբ առաջին անգամ ցույց են տալիս, թե ինչու պարտվեցինք վերջին պատերազմում, եւ ամենակարեւորը՝ ինչ պետք է անել այսօր, հենց հիմա՝ իրավիճակը մեր օգտին փոխելու համար: Վեպը նամակ է հայությանը, բայց, այնուամենայնիվ, սա գեղարվեստական ստեղծագործություն է, ու պետք է այդպես ընդունվի»:

Հեղինակը նկատեց նաեւ. «Ամբողջ «Սեւ հովազ-2»-ը զուտ ստեղծված իրավիճակից դուրս գալու մասին է: Նշված են կոնկրետ քայլեր: Ինձ հարցում են՝ իսկ ինչու այդքան բաց: Սա, ըստ գրքին ծանոթացած մասնագետների, դասագրքի պես մի բան է՝ համապատասխան կառույցների համար: Անվտանգության մասնագետի ծրագիր՝ առաջարկի տեսքով»:

Խոսելով առաջիկա ծրագրերի մասին՝ Աշոտ Աղաբաբյանը նշեց, որ այս պահին ունի հաջորդ ստեղծագործության երեք



տարբերակ, սակայն վերջնականապես դեռ չի կողմնորոշվել: «Մերոժան Տեր-Գուլանյանը գանգեց ու հետաքրքրվեց, թե արդյոք գրելու են «Սեւ հովազ-3»-ը: Պատասխանեցի՝ բավական է. մեկ տարի է՝ գրում են: Իսկ շաբաթներ առաջ ինձ մոտ էր եկել Գագիկ Գինոյանը. սասցի՞ դեռ չեմ որոշել: Մի քանի ծրագիր ունեմ. ամիսներ անց Հայաստան է գալու խորհրդային թիվ 1 քննիչ Թելման Գոլյանը: Նրան հանդիպելու առաջարկ են ստացել: Հիմա երեք տարբերակ ունեմ, բայց դեռ հստակ չեմ որոշել: Սովորաբար ինքս եմ ընտրում իմ հերոսներին ու եթե զգում եմ, որ իմն է, գրում եմ: Իմ 10 գրքերից, որոնցից մեկը վեպ չէ, ժողովածու է, 8-ը գրել եմ վերջին 6 տարում: Այնպես որ, շարունակելու են աշխատել»,- նշեց Աղաբաբյանը: «Սեւ հովազ-1» վեպը անցյալ տարվա աշնանը տեւական ժամանակ եղել է «Ար-

մենարես»-ի «Երեւանյան բեյթելեր» հեղինակային նախագծի առաջատարը:

Աշոտ Աղաբաբյանը հարյուրավոր իրապարակախոսական հոդվածների, ակնարկների եւ վեպերի հեղինակ է: Ընթերցողներին քաջածանոթ են նաեւ նրա «Ռեզիդենտ»-ը (2004 թվական), «Մեակը» (2013), «Գաղութը» (2013), «Թակարդում» (2018) ստեղծագործությունները: Ի դեպ, «Ռեզիդենտ» փաստագրական վեպը «Նոյյան տապան» հրատարակչության մոնիտորինգի արդյունքում ճանաչվել է «Տարվա գիրք»:

«Սեւ հովազ-2» գիրքը կարելի է ձեռք բերել «Բուկինիստ», «Ջանգալ», «Ֆենիքս», «Նոյյան Տապան» գրախանութների ցանցերում, «Գրքատուն», «Գամմա» գրախանութներում, նաեւ Կամերային երաժշտության տան մոտ գտնվող բացօթյա գրախանութում:

ՀՐԻԻ ԲԱՂՂԱՍՏԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է

Մյուսխետում փետրվարի 20-ի գիշերը 64 տարեկանում վախճանվել է ֆուտբոլի աշխարհի 1990 թվականի չեմպիոն, Գերմանիայի հավաքականի նախկին կիսապաշտպան Անդրեաս Բրեմեն: Այդ մասին հայտնում է գերմանական Bild պարբերականը:

Աղբյուրի տեղեկացմամբ՝ մահը վրա է հասել սրտի հետ կապված խնդրի հետևանքով: Վետերան մարզիկին շտապ տեղափոխել են հիվանդանոց, սակայն բժիշկներին չի հաջողվել վերականգնել նրա սրտի աշխատանքը:

Անդրեաս Բրեմեի խփած գոլն էր ապահովել Գերմանիայի ընտրանու հաղթանակը 1990 թվականի աշխարհի առաջնության եզրափակիչ խաղում: 85-րդ ռոպեին նա, սառնասրտորեն իրացնելով Արգենտինայի հավաքականի դարպասին նշանակված 11-մետրանոցը, 1:0 հաշվով հաղթանակ էր պարգևել բունդեսթիմին, որն այդ հաջողության շնորհիվ հռչակվել էր աշխարհի եռակի չեմպիոն:

Գերմանիայի հավաքականի կազմում Անդրեաս Բրեմեն դարձել է նաեւ 1986 թվականի աշխարհի եւ 1992 թվականի Եվրոպայի առաջնության արծաթե մեդալակիր, իսկ «Եվրո-88»-ում արծաթե է բրոնզե մեդալի:

Բրեմեն կարիերայի մեծ մասն անցկացրել է գերմանական «Կայզերսլաութերն»-ում (154 խաղ, 34 գոլ) եւ իտալական «Ինտեր»-ում (155 խաղ, 12 գոլ): Հանդես է եկել նաեւ «Բավարիա»-ում, «Սաարբրյուկեն»-ում եւ «Սարագոսա»-ում:

ԱՎԱՐՏՈՒՄ Է ԿԱՐԻԵՐԱՆ

Հայաստանի կանանց ծանրամարտի հավաքականի անդամ, Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր Հռիփսիմե Խուրշուդյանն ավարտում է պրոֆեսիոնալ կարիերան:

«Ոչ ոք չգիտի, թե ես ինչերի միջով եմ անցել այս մրցաշարին մասնակցելու համար: Նույնիսկ եղել է, որ հրաժարվել եմ, բայց ամուսինս ու ընկեր Արտաշը ինձ ոգեւորել ու բերել են այս մրցաշարին: Ուզում էի կարիերաս ավարտել՝ մեղալ նվաճելով, ինչն էլ եղավ, ու ինչի համար ուրախ եմ: 25 տարի է՝ այս մարզածեւում եմ»,- ասաց Խուրշուդյանը: Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիրն առանձնակի շնորհակալություն հայտնեց հայ երկրպագուներին, որոնք իր կողքին են եղել թե՛ հաղթանակների, թե՛ պարտությունների ժամանակ:

«Զգիտեմ ինչպես եմ թողնելու սպորտը: Մի կողմից՝ ուրախության արցունքներ են, մյուս կողմից՝ տխրում եմ ու մտածում՝ երանի կրկին 20 տարեկան լինեի ու Նորից մրցահարթակ դուրս գայի»,- ասաց նա: Ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում իրենց ելույթներն ավարտեցին Հայաստանի կանանց թիմի անդամները: Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում ընթացող Եվրոպայի առաջնության մրցումային 8-րդ օրը պայքարի մեջ մտան ծանրքաշային կին ծանրորդները: Հայաստանի հավաքականի անդամ Հռիփսիմե Խուրշուդյանը երկու հաջող մոտեցմամբ բարձրացրեց 102 եւ 105կգ: Այս ձեւում Խուրշուդյանը դարձավ բրոնզե մեդալակիր: Հրում վարժությունում նա բարձրացրեց 122 կգ: Երկամարտի 227 կգ քաշով նա բրոնզե մեդալ նվաճեց:

ԹԱՏՐՈՆ

«ԵՐԲ ԵՐԱԶԱՆՔԸ ԿՊՉՈՒՆ ՄԻՏՔ Է ԴԱՌՆՈՒՄ»

Հռոմի «Միսինա» թատրոնի բեմում փետրվարի 15-ից մարտի 10-ը «Սուրբ Ծնունդը Կուղիելլոյի ընթանիմում» ներկայացումն է՝ ըստ Էդուարդո Գե Ֆիլիպոյի համանուն ողիեսի: Ներկայացման ռեժիսորն ու գլխավոր դերակատարն է հայտնի թատերագիր, ռեժիսոր եւ դերասան Վինչենցո Մալեմմեն:

Ժամանակակից հայտնի այս տրագիկոմեդիան հայտնի է ողջ աշխարհում: Որոշ երկրներում այն առավել ճանաչված է. այդպիսի երկրներից է Հայաստանը, որտեղ պիեսի վերնագիրը թարգմանվել է ավելի ընդարձակ մեկնաբանությամբ՝ «Ծննդյան տոները սիւնյոր Կուպիելլոյի տանը»:

Իտալացի հայագետ Կարլո Կոպպոլան «Bari Connessa» կայքում մեծ հոդվածով անդրադարձել է թատրոնի եւ կինոյի հայ մեծանուն դերասան, ԽՍՀՄ եւ ՀՀ ժողովրդական արտիստ, Համագգային պետական թատրոնի հիմնադիր Սոս Սարգսյանի կողմից Էդուարդո Գե Ֆիլիպոյի

այդ ստեղծագործության բեմականացմանը՝ նշելով, որ Սոս Սարգսյանն օգտագործել է իր ընկերոջ, 2000-ական թվականներին սկզբին Իտալիայում Հայաստանի դեսպան Գագիկ Բաղդասարյանի թարգմանությունն ու խորհրդատվությունը: Հայ մեծանուն դերասանի գաղափարներն այս դասական իտալական պիեսի վերաբերյալ ակնհայտ երեւում են ներկայացման վերաբերյալ նրա նկարագրից. «Երբ հեքիաթը գալիս է փոխարինելու իրականությանը, երբ երազանքը կաշուն միտք է դառնում, դա, միգուցե, այդքան էլ վատ չէ: Ծննդյան տոների շեմին ամենքս էլ երազել ենք սիրում, սակայն սիւնյոր Կուպիելլոն չկարողացավ ժամանակին ազատվել իր երազից: Թվում է, թե ամեն ինչ իր հունով է ընթանում, չկա այլեւս ջրավորություն ու դժբախտություն, եւ միակ բանը, որ պետք է անել, մանուկ Քրիստոսի պատկերով խաղալիք պատրաստելն է, բայց կյանքն, այնուամենայնիվ, իրենն է թելադրում, եւ Կուպիելլոն երազանքի համար թանկ կվճարի»:

Իտալական թատրոնի այս խոշոր դասականի նկատմամբ Հայաստանի ջերմ վերաբերմունքը հավաստելու նպատակով Իտալիայում ՀՀ դեսպան Ծովիկար Համբարձումյանը ներկա է գտնվել Վինչենցո Մալեմմեի ներկայացման պրեմիերային Հռոմում: Ներկայացումից հետո դեսպանը հանդիպել է ռեժիսորի հետ: Այս կապակցությամբ դեսպանատան ֆեյսբուքյան էջում Ծովիկար Համբարձումյանը կատարել է հետևյալ գրառումը. «Չափազանց հաճելի էր հանդիպել Վինչենցո Մալեմմեին նրա «Natale in casa Cupiello» ներկայացումից հետո, որը պարզեց սուր զգացողություններ, ծիծաղ եւ արցունքներ, երազներ, սեր, ուրախություն եւ տխրություն, եւ այս ամենը՝ շնորհիվ մեծ ռեժիսորական տաղանդի եւ դերասանների բացառիկ ընտրության: Ներկայացումը ներկայացնում է Նեպոլիս իր բոլոր գույներով եւ երանգներով. քաղաք, որ սերտորեն կապում է հայերին եւ իտալացիներին իրենց մշակութային ինքնությամբ»:

Հ. ԲԱՂՂԱՍՏԱՐՅԱՆ

● Փետրվարի 22-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա «Յ. Ս. Բախ. «Սի միսոր Սեսսա»» համերգը: Տոմսերի արժեքը՝ 3000-15000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:30-ին:



Էջը՝ ՄԱՐԻԱՍ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ սվյալ հաստատություն սովորողի ընդունելության եւ սեղափոխման համար:

Հայկ Օհանյան (38 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու/ազատելու կարգի» 25-րդ կետի համաձայն՝ սովորողին հաստատություն ընդունելու համար ծնողը (որա օրինական ներկայացուցիչը) ներկայացնում է՝

- 1) դիմում՝ ուղղված տնօրենին,
- 2) սովորողի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը,
- 3) 3x4 չափի լուսանկար՝ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում» սովորողի էլեկտրոնային անձնական գործում վերբեռնելու նպատակով,
- 4) եզրակացություն՝ «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու վերաբերյալ՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից (ըստ անհրաժեշտության),
- 5) նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների, ուսումնասիրած առարկաների, ուսումնական տարվա ընթացքում տեղափոխվելիս՝ նաեւ ընթացիկ եւ կիսամյակային գնահատականների, բացակայությունների քանակի մասին,
- 6) եզրակացություն՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից՝ հանրակրթական հատուկ դպրոց ընդունվելու համար (ըստ անհրաժեշտության):

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Նշված կարգի 29-րդ կետի 3-րդ եւ 4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում ներկայացվում է փաստաթուղթ զինվորական կոմիսարիատից:

ԿՎՐԳ

ՀԱՐՑ. Որքա՞ն է հարակից իրավունքների գործողության արժեքը:

Ժորա Նալբանդյան (26 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հարակից իրավունքների պահպանության ժամկետը, համաձայն Հռոմի կոնվենցիայի, առնվազն 20 տարի է, սակայն ազգային օրենքներով կարող են սահմանվել պահպանության ավելի երկար ժամկետներ:

Մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարակից իրավունքների պահպանության ժամկետները սահմանված են «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Ահա թե սեզոնից դուրս ինչ է 10.000 դրամով վաճառվում գովազուցիչ ըմպելիքների համար նախատեսված սառնարանում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 6 - 10 + 2 + 6	Արարատ	+ 1 + 4 + 12 + 14
Կոտայքի լեռներ	- 6 - 9 + 2 + 5	Արմավիր	- 1 + 4 + 12 + 14
Կոտայքի նախալեռներ	0 - 2 + 9 + 11	Վայոց ձորի լեռներ	- 6 - 10 + 2 + 4
Գեղարքունիք	- 5 - 9 + 2 + 5	Վայոց ձորի նախալեռներ	- 1 + 2 + 12 + 14
Լոռի	- 2 - 6 + 4 + 8	Սյունիքի հովիտներ	+ 2 + 5 + 9 + 13
Տավուշ	0 - 4 + 5 + 9	Սյունիքի նախալեռներ	- 2 - 4 + 6 + 9
Արագածոտնի լեռներ	- 6 - 11 + 2 + 4	ԼՂՀ	- 2 - 3 + 6 + 8
Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7 + 8 + 12	Երեւան	+ 6 + 8 + 10 + 12

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 20.2.2024

Գլխավոր խմբագիր՝
ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: